

տաթուղթեր չունէր, շատ դիւանական միտք մը չըլլալուն, բայց կը վայելէր վստահութիւնը ժողովուրդին: Անիկա մինչեւ Ակոյին քարայրը չէր կրնար հասկնալ հեղինակութիւնը այդ մարդուն, տաճկահայ, քիչ մը գրոց-բրոց, որ յեղափոխական էր առանց կարլ Մարքս կարդացած ըլլալու ու չէր ամէնար իր անյատակ տգիտութենէն: Բախումը չուշանար պիտի, եթէ երբեք ստիպողական գործեր այդ ընկերը -տգէ՛տը- չկանչէին Մուշ, ուր չարտօնուեցաւ իջնել, հակառակ իր բուռն փափաքին, այծի մօրուքին պատճառով: Քիչ-քիչ ծագում առաւ անվստահութեան այն ոլորտը, որ ատելութիւնը կը կանխէ: Ու կանգ առաւ: Այսինքն՝ չկրցաւ աճիլ: Պատասխանատուն ինքն է նորէն, որ ապրած է այդ խստաբարոյ լեռներուն մէջ, սուր մօրուքիկը անձէն անպակաս, խորհած, կազմակերպած (խորանարդ բա՛ռը), կռուած, փախած, ետ դարձած, նորէն փախած, բայց չէ տեսած: Ըսել կ'ուզեմ ուշադիր ու պահող ականարկով մը չէ հետեւած տեղին, ինչպէս իրողութեանց կարկառներուն: Անշուշտ յեղափոխութեան գործօն մասնակիցներու կողմէ հրատարակւած յուշերուն մուշկ անկապակցութիւնն ու անբաւարարութիւնը մասով մը կ'ընեն բացատրելի Մաթիկին ալ պատմումը: Չէ կարելի տիրապետել դէպքերը, կը հասկընամ՝ ուրիշներու անհանգիստ ու յայտ վայելումին համար անոնց գրական դասաւորումը, երբ կանուխէն, մեծ թերթերու պատերազմական թղթակիցներուն նման չենք մարզած մեր նայուածքը այդ ուղղութեամբ: Չեմ ենթադրեր, որ մեր մարտիկները, պայքարին այդ խռովքներուն մէջ, ըլլան մտածած օր մը պատմուելիք յուշերուն արժէքին: Յիշատակ պատմելը ծերութեան վայելք է ու զինուորները անմուրատ էին անկէ ալ: Անոնք, իրենց երիտասարդութեան, կռիւն են ունեցած իրենց իբր գերագոյն մտահոգութիւն ու ոլորտ: Իրողութիւններէն երեսուն մը տարի յետոյ, ծերացած մարտիկը, երբ գրիչը կ'առնէ ձեռք, վերակազմելու համար այդ անցեալը, ինքն իսկ կը հաւատայ անոր: Ահագին է լայնքը այդ պարա-